ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ)
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 3
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ 4
ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ 6
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 7

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է ‹‹Տարրական մանկավարժություն և մեթոդիկա›› մասնագիտության ուսուցչի (դասվարի) կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կառուցվածքը («Մաթեմատիկա», «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհ» առարկաներից), պատասխանների ձևաթղթի լրացման կարգը, գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկված բովանդակային նյութը, առաջարկվող գրականության ցանկը:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կազմման համար հիմք են հանդիսացել հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների «Մաթեմատիկա», «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհ» առարկաների չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը, հանրակրթության պետական չափորոշիչների դրույթները, ինչպես նաև տարրական կրթության մանկավարժությանը, տարրական դասարաններում «Մաթեմատիկա», «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհ» առարկաների ուսուցման մեթոդիկային առնչվող հիմնարար գաղափարները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթիկը պարունակում է 40 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 72 միավոր (100%):

«Մաթեմատիկա»- 30միավոր

«Մայրենի»- 36միավոր

«Ես և շրջակա աշխարհ»- 6 միավոր

«Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կառուցվածքային առումով ունեն հետևյալ երկու հիմնական տեսակները.

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ, որոնց յուրաքանչյուր հարցին հետևում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկ պատասխանն է

ճիշտ:

Գնահատման չափանիշը. ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

2. Կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնց ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում:

Գնահատման չափանիշը. ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել համապատասխան թիվը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների «Մաթեմատիկա» առարկայի բոլոր բաժինները, ինչպես նաև մաթեմատիկայի տարրական ուսուցման մեթոդիկայի դասընթացի հետևյալ բաժինները.

- թվաբանություն,
- մեծություններ,
- երկրաչափության տարրեր,
- հանրահաշվի տարրեր,
- տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր:

«Մայրենի» առարկայից թեստում ընդգրկված առաջադրանքներն ընտրված են մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայի դասընթացի 4 հիմնական բաժիններից («Գրաճանաչության մեթոդիկա», «Բացատրական ընթերցանության մեթոդիկա», «Քերականության մեթոդիկա», «Խոսքի զարգացման մեթոդիկա»), որոնց բովանդակությունը համապատասխանում է 1-4-րդ դասարանների «Մայրենի» առարկայի ծրագրային պահանջներին: Նշված բաժիններից նախատեսված են ինչպես գործնական կարողությունները ստուգող առաջադրանքներ, այնպես էլ՝ տեսական պնդումներ:

Թեստում ընդգրկված են ընտրովի պատասխանով առաջադրանքներ: Տրված պատասխանների քանակից առաջադրանքի պահանջին համապատասխանում են 1-ը, 2-ը կամ 3-ը:

Ճիշտ պատասխանի դեպքում յուրաքանչյուրին տրվում է 1 միավոր. այսպիսով, յուրաքանչյուր առաջադրանքից հնարավոր է վաստակել 1, 2 կամ 3 միավոր:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համարին կամ համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել x նշանը:

Առաջադրանքներում պահանջվող ճիշտ պատասխանների քանակից ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են 1, 2 կամ 3 նշումները:

Թեստային առաջադրանքների բովանդակության հիմքում դրված են հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում դասավանդվող «Մայրենի» առարկայի ծրագրային նյութերը և ուսուցման մեթոդիկան:

<u>«Ես և շրջակա աշխարհ»</u> Բովանդակային առումով«Ես և շրջակա աշխարհ» առարկայի առաջադրանքներում ընգրկված են հանրակրթական դպրոցի 2-4-րդ դասարանների բոլոր բաժինները:

«Ես և շրջակա աշխարհ» առարկայի բաժնում ընգրկված են ընտրովի պատասխանով առաջադրանքներ: Յուրաքանչյուր առաջադրանք պարունակում է

պատասխանի 4 տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ։

Գնահատման չափանիշը. ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանին կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել **X** նշանը:

ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Վերջնական և վավեր է համարվում միայն Պատասխանների ձևաթուղթը: Ջնջումներ պարունակող պատասխանը համարվում է անվավեր: Ձևաթղթի լրացուցիչ հատվածում սահմանափակ թվով հնարավորություն է տրված սխալ պատասխանները ճշգրտելու՝ առանց Պատասխանների ձևաթղթում ջնջում կատարելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար գործածության երաշխավորված «Մաթեմատիկա»առարկայի դասագրքերը։
2. Իսկանդարյան Ս. Ս., Իսկանդարյան Ս. Ա. «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Իսկանդարյան Ս. Ա. «Տարրական դպրոցում հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր., «Զանգակ-97», 2010. – 128 էջ:
4. Իսկանդարյան Ս. Ա., Իսկանդարյան Ս. Ս. «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր., «Զանգակ-97», 2014. – 136 էջ:
5. Իսկանդարյան Ս. Ա., Իսկանդարյան Ս. Ս. «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր., «Զանգակ-97», 2010. – 164 էջ:
6. Հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար երաշխավորված գործող այլընտրանքային այբբենարանները և մայրենիի այլընտրանքային դասագրքերը։
7. Բուհերի «Տարրական դպրոցի մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բաժինների ուսանողների համար երաշխավորված դասագրքերից՝

- Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա , Եր., Լույս, 1986։
- Ջ.Հ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր.,Զանգակ, 2018։
- Ս.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., Լույս,1981։

8. Հանրակրթական դպրոցի 2-4-րդ դասարանների համար գործածության երաշխավորված «Ես և շրջակա աշխարհ» առարկայի դասագրքերը։

Ծանոթություն: **Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար։**